ՌԿԲ.

ՅԲՇ.թի իբր ի 15 ժամուն ծնաւ դուստր սուլթան մուստաֆային, որում եդին անուն Պոէհան սուլթան։ Եւ հրամայեցաւ լինիլ տօնանմայ զերիս տիւս, և զերիս գիշերս. և սկսան ի յունվ.ի 4էն։ (Հ. Յակոբոս Զամչեանց առ Մելգոնեան, 1766 յունվ.ի 20. [Կ. Պոլիս])։

ՌԿԳ.

Պետրոս վարդապետն՝ չըրախն սարգիս վարդապետին եմուտ ի նաւ իզմիրու գնալ յիզմիր, և անտի ի վենետիկ. բայց նաւն բեկեալ ի ծովու մազապուրծ զերծաւ ի մահուանէ և դարձաւ ի ըստամպոլ. բայց այժմ պատրաստեալ է վերստին երթալ ի վենետիկ։ Երևի գալ այդր առնուլ զպատկանեալս տպագրութեան։ (Հ. Յակոբոս Զամչեանց առ Մելգոնեան, 1766 փետր. 15. [Կ. Պոլիս])։

ՌԿԴ.

Յայսոսիկ աւուրս մեռաւ և մօնսինեօր Շէրիմանն, իբր յանկարծօրէն, և եթող զիւրն զամենայն երկուց նեբօթիցն կրտսեր եղբարց գօնթէ Լօրէնցոյին, որ ի վենէտիկ. և մնաց նա որ ի հռօմ մերկ և անյոյս։ Փոքր պատուով գնաց, որովհետև ոչ ունէք եթող ինչ որ իցէր ըստ սովորութեան երկրին, սպասաւորացն ինչ ոչ եթող, և զրագրին իւրոյ միանգամ միայն տաս տասուերկու սկուդ եթող զի տացի և այլ այսպիսի միսքին միսքին տրամաբաշխութիւնս։ Ծանիր և զայս, զի մօնսինեօր աստիմանին յայսոսիկ աւուրս օրհնեցաւ ի գարտինալ Տեօրքէն Եպիսկոպոս ինփարթիպուս[1], կարի խնդութեամբ բազմաց։ (Հ. Գէորգ Պաղտատեանց առ Հ. Մկրտիչ Անանեանց, 1766 ի դեկ. 26. ի հռօմ)։

ՌԿԵ.

Ի գիշերի որում լուսանայր յունվարի 8 ԵՇ.թի, փոնկեցաւ պէյլիկ զալիօն մի, ղըզլա կոչեցեալ, որ էր խարըսխեալ յանդիման պալըխլըին. և այնու վառմամբ, գնացեալ անկաւ ի վերայ նաւուց, և այրեաց զնաւս ինչ, մի ի նոցանէ լի էր ցորենով։ Իսկ յայրեցեալ նաւուց մին գնաց և անկաւ ի վերայ քեօշքին պալատանն՝ այնալը խաւախ կոչեցեալ. և այրեաց զայն, զոր և յայսմ ամի նորոգեցին...։ Իսկ այրեցեալ նաւն արքունի, գնաց ի ճիպալին և անդ այրեաց զբազում տունս հրէից։ Ի յունվարի 10, յաւուր շաբաթու, իբր ի 21 ժամու, ծնաւ սուլթան մուստաֆային արու զաւակ. անուն եդին նմա, սուլթան մէհէմէտ. իսկ տօնանման չարարին. զի քարոզ կարդաց վասն տօնանմային լինել ի թագաւորէն՝ հիւմայէ, այսինքն շապայ։... Դարձեալ ի գիշերի, որում լուսանայր ԳՇ.թի յունվարի, 13[2]։ Եւ զկնի չարժին ել հողմն սաստիկ։ Ասեն թէ յայսմ գիշերի ի 11 կամ յ12 ժամէն մինչև ց13 ժամն ելեալ է կամարաձև լոյս ինչ, որոյ մի ծայրն էր ի վերայ արքունի պալատին, այսինքն սառա պուռնուին, և միւս ծայրն դէպի Էիւպ կամ ի խասքեոյ։ Ոմանք թէ և մի ծայրն դէպ ի պօղազ իչին։ Ասեն թէ և ի յունվարի 14 ևս, ի նոյն ժամու ելեալ է նոյն լոյսն. սակայն կայր և լոյս լուսնին։ (Հ. Յակոբոս Զամչեանց առ Մելգոնեան, 1767 յունվ. 14. [Կ. Պոլիս])։

---

1. Տիրազոսաւոր եպիսկոպոս։
2. Երկրաշարժի վրայ է խօսքը։